

ԵՎՐԱՍԻՆՏԵՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՐԱՆՑՎԵՑ ՅԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹԻՎ»

ՎՐԱՍՏԱՆԸ, ՈՒԿՐԱԻՆԱՆ ԵՎ ՄՈՒԴՈՎԱՆ ԴԱՐՁԱՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՅՎԱԾ ԱՆԴԱՍ

Հունիսի 27-ին Բրյուսելում կայացավ Վրաստանի Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրման արարողությունը: Համաձայնագիրը ստորագրեցին. վրացական կողմից՝ վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Եվրամիության կողմից՝ Եվրոպայի խորհրդի նախագահ Յերման Վան Ռոմպինեն և Եվրահանձնաժողովի նախագահ Խոսե Սանտոն Բարոզուն:

Փաստաթուղթը ստորագրեցին նաև Եվրամիության բոլոր 28 անդամ երկրների կառավարությունների ղեկավարները: Վրաստանի հետ մեկտեղ, նման համաձայնագիր ստորագրվեց նաև Մոլդովայի և Ուկրաինայի հետ: «Այսօր իմ հայրենիքի պատմության մեջ գրանցվում է նոր հիշարժան տարեթիվ: Այսօր Վրաստանը վիթխարի քայլ կատարեց ազատ Եվրոպայի ուղղությամբ: Այսօրվա առթիվ շնորհավորում եմ ողջ Վրաստանին: Հենց այսօրվան հասնելու համար շատ սերունդներ զոհաբերեցին իրենց: Ուրախ եմ, որ հենց իմ սերնդին բախտ վիճակվեց հասնելու մեր նախնիների այս երազանքին: Այսօր Վրաստանին տրվում է պատմական հնարավորություն վերադառնալու իր բնական միջավայ-

րին՝ Եվրոպային: Միջավայր, որից մենք հարյուրավոր տարիներ արհեստականորեն անջատված էինք»,- իր ելույթում հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին: Նրա խոսքերով, հունիսի 27-ը բացառիկ ամսաթիվ է, քանզի մեր երկրի պատմության մեջ առաջին անգամ ստացվեց այնպես, որ բոլորը հաստատակամորեն, էլնելով համընդհանուր համաձայնությունից և ընդհանուր արժեքներից, միացան քաղաքական և տնտեսական վիթխարի միությանը: «Այսօր բացարձակապես նոր փուլ է սկսվում Վրաստանի և Եվրամիության միջև: Այսօր սկս-



վեց այն ուղին, որը առավել խորացնելու է ամրացնելու է մեր հարաբերությունները»,- ընդգծեց վարչապետը: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԱՍՈՑԻԱՅՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԲԱՐՐՈՒԹՅՈՒՆ ԿԲԵՐԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, երեկ ելույթ ունենալով Բաթումիում անցկացվող պաշտպանության և անվտանգության միջազգային խորհրդաժողովին, հայտարարեց, որ այսօր Եվրամիության հետ Ասո-

ցիացման համաձայնագիրը օգուտ է բարություն կրելու Վրաստանի ժողովրդին: «Այն է՛լ ավելի կամրացնի ժողովրդավարական ինստիտուտները, կստեղծի առավել պատասխանատու և ժողովրդի կարիքներին նպատակաճ կառավարություն: Այն կմեծացնի զբոսաշրջիկների հոսքը, կուժեղացնի բնապահպանությունը և կթափանցի համակարգը՝ այն հասցնելով Եվրոպական մակարդակի»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:



ԱՍՈՑԻԱՅՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ. 50 ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Վրաստան-Եվրամիության Ասոցիացման համաձայնագիրը միջազգային պայմանագիր է, որն օգնելու է Վրաստանին բոլոր ոլորտներում մերձենալու Եվրամիությանը: Վրաստան-Եվրամիություն Ասոցիացման համաձայնագրի մի մասն է կազմում ազատ առևտրի մասին համաձայնությունը: Ասոցիացման համաձայնագրի իրականացումն աջակցելու է Վրաստանին՝ կազմավորվել որպես եվրոպական ձեռի պետություն: Համաձայնագիրը բաղկացած է 1000 էջից, այն նախատեսում է Վրաստանի օրենսդրության աստիճանական մերձեցումը Եվրամիության օրենսդրությանը:

Ասոցիացման համաձայնագրի նախատարածքում տեղի է ունեցել 2013 թվականի նոյեմբերի 23-ին, որը նշանակում է, որ «Գոյություն ունեցող տեքստը հնարավոր է ենթակա լինել միայն խմբագրված ուղղումներին»: Համաձայնագրի ստորագրումն անցկացվեց ընթացիկ տարվա հունիսի 27-ին, Բրյուսելում: Ասոցիացման համաձայնագրի կարելու մասը, այդ թվում՝ ազատ առևտրի մասին, գործելու է փաստաթուղթը ստորագրելուց պես, իսկ ամբողջությամբ այն կգործի Եվրամիության 28 անդամ երկրների ազգային խորհրդարանների, Եվրախորհրդարանի և Վրաստանի խորհրդարանի կողմից վավերացնելուց հետո: Այդ գործընթացի ավարտի համար անհրաժեշտ է 2-3 տարի:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՊԱՏԱ ՉԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ. «ՆԱԽ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՓՐԿԵՆՔ, ԱՊԱ ՈՐՈՇԵՆՔ, ԹԵ ՈՒՄ ԵՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ»

Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի, այդ համաձայնագրում ազգային փոքրամասնություններին նվիրված բաժնի, ազգային փոքրամասնությունների ինտեգրմանն ուղղված միջոցառումների մասին մեր հարցերին պատասխանում է Վրաստանի հաշտեցման և իրավահավասարության հարցերով պետնախարար Պատա Չաքարեիշվիլին:

մաձայնագրին: Ի՞նչ սպասելիքներ կարող ենք ունենալ համաձայնագրի կիրարկումից: - Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի նշանակության մասին շատ է գրվել ու ասվել: Այն ներառում է երկրի կյանքի

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

- Բառոն Պատա, բնականաբար, առաջին հարցը վերաբերում է հունիսի 27-ին ստորագրած Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրին:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հունիսի 24-ի հրամանագրով, Յուրի Վարդանյանը նշանակվել է Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան:



58-ամյա Յուրի Վարդանյանը ծնվել է Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում: Ավարտել է տեղի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության, Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի «Ժողովրդական տնտեսության պլանավորում» ֆակուլտետները: ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ է, ծանրամարտի աշխարհի կրկնակի, Օլիմպիական խաղերի, Եվրոպայի ութակի և ԽՍՀՄ քառակի չեմպիոն ու զավթաթակիր: 1978-81 թվականներին ծանաչվել է աշխարհի լավագույն ծանրորդ, սահմանել աշխարհի 43 ռեկորդ: Միջին քաշում առաջինը երկամարտի ցուցանիշը հասցրել է 400 կգ-ի: Մոսկովյան օլիմպիադայում արժանացել է «Ոսկե կիլոգրամներ» մրցանակի (անձնական քաշից առավելագույն ծանրություն

բարձրացնելու համար): Տարբեր մրցումներում նվաճել է 111 ոսկե մեդալ:

Եղել է արհմիությունների Հայաստանի սպորտընկերության նախագահը, ԱՄՆ-ի ծանրամարտի հավաքականի խորհրդատու-մարզիչը, Կալիֆոռնիայի Հայերի միության նախագահը:

2009-2013 թվականներին Հայաստանի նախագահի խորհրդակցան էր, 2013թ. մայիսի 8-ից 2014թ. մայիսի 3-ը՝ Հայաստանի սպորտի և երիտասարդության հարցերի նախարարը:

Ամուսնացած է, ունի երեք որդի:

ՈՒՋՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՋՆԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՎԱՆՔՆՈՒՄ Է

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարությունն ընդունել է երկրի ազգային ռազմավարությունը:

Ընդունված փաստաթղթում նշված է, որ Վրաստանի բռնազավթված տարածքներում միջազգային

խաղաղարար ուժերի բացակայությունը, այդ տարածքի ռազմականացումը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԻ ՂԱՐԻԲԱՆՎԻՒԹՅԱՆ «ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԳՐԱՆՑԿԵՑ ԳԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹԻՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իրակի Ղարիբաշվիլու խոսքերով, Վրաստանը հին պատմության է ունենում մշակույթի երկիր է, եւ այսօր այն իր բացառիկ մշակույթով, ավանդույթներով մուտք է գործում ազատ եւ ժողովրդավարական ազգերի եվրոպական միությունը, իր ավանդը ներդրում նրա բազմաբնույթ մշակույթի, խաղաղության եւ անվտանգության ամրապնդման գործում:

Վրաստանի վարչապետի ելույթից հետո, ստորագրման արարողությանը ելույթ ունեցան Գերմանիայի Վան Ռոմպին, Ժոզե Մանուել Բարրոզու:

Եվրոպական խորհրդի նախագահի խոսքերով, հունիսի 27-ը եվրոպայի համար նշանակալից օր է: Գիծելով Վրաստանի, Ուկրաինայի եւ Մոլդովայի ներկայացուցիչներին՝ Եվրախորհրդի նախագահը նշեց, որ եվրամիության եւ այդ երկրների միջեւ «հարաբերությունները հիմնված են ընդհանուր արժեքների վրա»: «Այս ստորագրման արարողությունը նշանակալից է, թեպետ մյուս կողմից

հանդիսանում է նաեւ հաշվառման սկիզբը: Դա վերջնական նպատակը չէ, այլ նպատակին հասնելու մեկնարկը»,- հայտարարեց Վան Ռոմպինը: Եվրախորհրդի նախագահի հավաստմամբ, Վրաստանը, Մոլդովան եւ Ուկրաինան կունենան եվրամիության հետ ամայց եզրային պայմանավորվածություններ, որոնք կարող են հանգեցնել կիրճի վրային: Գրանց էկոնոմիկան լրիվությամբ կհետեզրվի եվրոպական շուկայում:

Եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարրոզու, ընդգծելով Ասոցիացման համաձայնագրի ստորագրման նշանակությունը, նշեց, որ համաձայնագիրը ստորագրած երկրներն ստանում են բարեփոխումների անցկացման եւ էկոնոմիկայի զարգացման հնարավորություն: Միաժամանակ, Բարրոզու վստահեցրեց, որ Ասոցիացման համաձայնագիրը ոչ մեկի դեմ ուղղված չէ:



Georgia, the Republic of Moldova and Ukraine. Cérémonie de signature avec la Géorgie, la République de Moldavie et l'Ukraine.

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է


(Սկիզբը՝ 1-ին էջում)

նացումը մեծացնում է սաղարանի եւ ռազմական ճգնաժամի սպառնալիքը: Փաստաթղթում նշվում է նաեւ, որ Վրաստանը կրկին կանգնած է լուրջ սպառնալիքների եւ մարտահրավերների առջեւ, ինչը, առաջին հերթին, պայմանավորված է երկրի տարածքի բռնազավթմամբ եւ հակամարտության սրման հավանականությամբ: «Այդ ամենը սպառնալիք է ստեղծում ոչ միայն Վրաստանի, այլեւ տարածաշրջանի անվտանգությանը եւ արգելակում է երկրի կայուն զարգացումը: Ելնելով դրանից՝ Վրաստանի անվտանգության քաղաքականության կարենորագույն խնդիրը շարունակում է մնալ տարածքների ապաբռնազավթումն ու խաղաղ ուղիով երկրի տարածքային ամբողջականության վերականգնումը: Վրաստանը վա-

րում է բարիդրացիական քաղաքականություն, որի շրջանակներում, մեծ ուշադրություն է հատկացվում տարածաշրջանային եւ միջազգային մակարդակով խաղաղության կայունության ամրապնդման գործում սեփական ավանդի ներդրմանը»,- ասված է Վրաստանի ազգային ռազմավարության փաստաթղթում:

Գրանում ընդգծվում է, որ Ռուսաստանը սպառնալուծազանց գլխավոր աղբյուրն է, իսկ բռնազավթված տարածքներում միջազգային խաղաղարար ուժերի բացակայությունը եւ այդ տարածքների ռազմականացումը մեծացնում է սաղարանի եւ ռազմական ագրեսիայի սպառնալիքը:

Ռիսկերի թվում են նաեւ տարածաշրջանային անկայունությունը, տրանսազգային եւ կիբեր սպառնալիքները, բնական եւ տեխնոգենիկ աղետները:



ՈՒԿՐԱԻՆԱ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԶՈՂԿԵԼ Է 423 ՄԱՐԴ

ՄԱԿ-ում հայտնել են, որ Ուկրաինայի արելեյքուն ապրիլի 15-ից մինչեւ հունիսի 20-ն ընկած ժամանակահատվածում զոհվել է 423 մարդ:

Չոկվածների (զինվորականների եւ քաղաքացիական անձանց) թվաքանակի վերաբերյալ տվյալները հիմնվում են պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկատվության վրա, ասել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի մարդու իրավունքների հարցերով օգնական Իվան Շինոնովիչը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում ունեցած ելույթի ժամանակ:

Նա նշել է, որ վերջին երկու շաբաթվա ընթացքում կրկնակի ավելացել է այն ուկրաինացիների թիվը, ովքեր լքել են իրենց տները: Դրանից 23-ի դրությամբ, ՄԱԿ-ի փախստականների գործերի գործակալությունը արձանագրել է, որ տեղահանված քաղաքացիների թիվը գերազանցել է 46 հազարը:

ԵԱԿ ԴԻՏՈՐԿԱՆՑ ԼԵՏԱԿԵԼ ԵՆ

ԵԱԿ-ն հաստատել է Ուկրաինայի հարավարելեյքուն կազմակերպության չորս դիտորդների ազատման վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ռուսաձեռն ուժերի կողմից առեւանգվել էին մեկ ամիս առաջ:

ԵԱԿ-ում նաեւ մտահոգություն են հայտնել կազմակերպության եւ չորս դիտորդների ճակատագրի կապակցությամբ, որոնք Ուկրաինայում առեւանգվել են մայիսի վերջին: Դրա համար պատասխանատվությունը չի ստանձնել «ոչ մի մարդ, ոչ մի կազմակերպություն», հայտարարել է Ուկրաինայում ԵԱԿ-ի հատուկ մոնիթորինգային առաքելության մասնուլի քարտուղար Մայքլ Բոչորկովը:

ՈՒՍԱՍՏԱՆ

ՋԻՆՈՒԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԶԵՂԱԿ Է ԳՈՐԾԱՐԱՐՎՈՒՄ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Դաշնության խորհրդին առաջարկել է չեղյալ հայտարարել Ուկրաինայի տարածքում ՌԴ-ի զինուժերի օգտագործման վերաբերյալ որոշումը: Այդ մասին հունիսի 24-ին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին հայտնել է պետության ղեկավարի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

Նա նշել է, որ, Ուկրաինայի արելեյքուն տարածաշրջանների իրադրության կարգավորման հարցի շուրջ եռակողմ բանակցությունների սկսվելու կապակցությամբ, նախագահը սենատորներին առաջարկել է չեղյալ հայտարարել Ռուսաստանի զինուժերի օգտագործման վերաբերյալ իրենց որոշումը:

Նշենք, որ ՌԴ խորհուրդը Ուկրաինայի տարածքում ՌԴ-ի զինված ուժերի օգտագործման վերաբերյալ որոշումն ընդունել էր 2014 թվականի մարտի 1-ին: Այդ որոշումը պետության ղեկավարին հնարավորություն էր տալիս «Ռուսաստանի Դաշնության զինված ուժերն օգտագործել Ուկրաինայի տարածքում մինչեւ այդ երկրում հասարակական-քաղաքական իրադրության նորմալացումը»:

ԻՍՐԱՅԵԼ

ՔՐԴԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՏՐԱՏԱՎԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Իսրայելի արտաքին գործերի նախարար Ավիգոր Լիբերմանը ԱՄՆ պետքարտուղար Ջոն Թերրիի հետ համեմատմանը հայտարարել է, որ Իրաքը բոլորի աջքի առաջ մասնատվում է, քրդական պետության ստեղծվելն անխուսափելի է, եւ մեծ ռիսկ է, Իսրայելը կճանաչի այդ պետությունը:

Դրանից առաջ էլ Իսրայելի նախկին նախագահ Շիմոն Պերեցը ամերիկացի իր պաշտոնակից Բարաք Օբամայի հետ համեմատման ժամանակ հայտարարել էր, որ քրդերը «դեֆակտո» ստեղծել են իրենց պետությունը եւ, նրանցից նավթ գնելով, թուրքիան պատրաստ է հաշտվել այդ իրողության հետ:

ԿՐԹԱԿԱՆ



ԵՐԿՐԻ ՄԱՍՇՏԱԲՈՎ ԳՐԱՆՑԿԵԼ Է 45 421 ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻ

2014-2015 ուսումնական տարվա համար Վրաստանի հանրային դպրոցներում գրանցվել է 45421 առաջին դասարանցի:

Ինչպես նշեցին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունում, առաջին դասարանցիների էլեկտրոնային գրանցման գործընթացն ավարտվեց հունիսի

20-ին: Հունիսի 23-ից համապատասխան դպրոցներն սկսել են ընդունման համար աշակերտների փաստաթղթերի ընդունումը: Փաստաթղթերի ընդունման վերջ-

նաժամկետը հուլիսի 4-ն է: Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը առաջին դասարանի համար գրանցված աշակերտների ծնողներին կոչ է անում մինչեւ հուլիսի 4-ը դպրոցներին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը: Հակառակ դեպքում, գրանցումը կհայտարարվի անվավեր:

ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 26-ին վրաց լեզվի եւ գրականության քննությանը մեկնարկեցին միասնական ազգային քննությունները:

Ինչպես տեղեկացրեց քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, հունիսի 26-ի համար գրանցված 8589 դիմորդներից 246-ը, այսինքն՝ 3 տոկոսը չի ներկայացել քննության: Ցավոք, եղել են նաեւ ուշացման դեպքեր թիվի տեխնիկական համալսարանում եւ Քուբայիսի քննական կենտրոնում: Նրա խոսքերով, քննական գործընթացում այլ իրավախախտումներ չեն նկատվել:

Իր հերթին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեմն հայտարարեց, որ քննական գործընթացն անցում է անափան, առանց միջադեպերի: «Այս տարի առավելագույնս արվել է աշխատանքների ստուգման ժամանակ թույլ տրվող սխալները նվազագույնի հասցնելու ուղղությամբ: Բոլոր դիմորդներին հաջողություն եւ մաղթում եւ վստահեցնում, որ պարբերաբար կվե-



ռով դուրս մնացին մրցույթից: Երկրի համալսարաններում այս տարվա ընդունելության համար հատկացվել է 45 հազար տեղ: Վրաստանում միասնական ազգային քննությունները կապարտվեն հուլիսի 16-ին: Քննությունները կիրաքարակվեն օգոստոսի առաջին կեսին:

ԱՎԵԼԻ ՇԱՏ ԿՏՐՎԵՑԻՆ ՖԻԶԻԿԱՅԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Հանրային դպրոցների 11-րդ դասարանում անցկացված քննություններին ավելի շատ աշակերտներ կտրվեցին ֆիզիկայից:

Նշենք, որ շրջանավարտները հանձնում էին չորս քննություն՝ աշխարհագրությունից, կենսաբանությունից, քիմիայից եւ ֆիզիկայից: Վերջնական տվյալներով, բոլորից շատ

աշակերտներ կտրվել են ֆիզիկայի քննությունից: Այդ աշակերտների թիվը կազմել է ընդհանուրի 6.64 տոկոսը: Աշակերտների ընդհանուր թվի 6.13 տոկոսը կտրվել է քիմիայի, 3.39 տոկոսը՝ կենսաբանության եւ 1.5

տոկոսը՝ աշխարհագրության քննությունից: Ընդհանուր առմամբ, քննությունների համար գրանցվել էր 40679 շրջանավարտ: Այն աշակերտները, ովքեր վերոնշյալ առարկաներից որեւէ մեկի քննությանը չեն հաղթահարել արգելագիծը, այդ քննությունը կարող է հանձնել հաջորդ տարի, 12-րդ դասարանն ավարտելուց հետո:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒԾ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍԱՆ-ՆԱՏՕ



Ա.Ֆ.ՈՒՍՄՈՒՍՅԱՆ. «ԱՆՅԱՆՍԸ ՎՐԱՍԱՆԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՀԱՍՏԱՊՈՐՏԱԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱՐ»

Բրյուսելում, ՆԱՏՕ-ի միջնաստիճակի բացումից առաջ, հունիսի 25-ին այլանսի գլխավոր քարտուղար Անդրեյ Ֆոգ Ռասմուսսենը հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն Վրաստանին առաջարկում է համագործակցության նոր հիմնական ծրար:

«Այն գլխավոր հարցերից մեկը, որը մենք մտադիր ենք քննարկել, բաց դռների քաղաքականության նշանակությունը, քանզի դա օգտակար է ոչ միայն ռազմաքաղաքական այլանսի լիարժեք անդամ ցանկացողների, այլև անմիջականորեն այլանսի համար: Մեր գլխավոր սկզբունքներն անփոփոխ են: Մենք պաշտպանում ենք այն երկրներին, ովքեր մտադիր են ինտեգրվել ՆԱՏՕ-ին», - նշեց այլանսի գլխավոր քարտուղարը: Այդ առումով,

ղաքականությունն է: Մենք կխոսենք սապիրանտ երկրների ձեռք բերած առաջընթացի մասին: Ցանկանում են կրկին անգամ կրկնել բաց դռների քաղաքականության նշանակությունը, քանզի դա օգտակար է ոչ միայն ռազմաքաղաքական այլանսի լիարժեք անդամ ցանկացողների, այլև անմիջականորեն այլանսի համար: Մեր գլխավոր սկզբունքներն անփոփոխ են: Մենք պաշտպանում ենք այն երկրներին, ովքեր մտադիր են ինտեգրվել ՆԱՏՕ-ին», - նշեց այլանսի գլխավոր քարտուղարը: Այդ առումով,

նա առանձնակի ընդգծեց Վրաստանի առաջընթացը: «Մենք Վրաստանին առաջարկում ենք Յուրիստատվանտյան բլոկի հետ համագործակցության նոր հիմնական ծրար: Դա Վրաստանին կօգնի է՛լ ավելի մեծնալու ՆԱՏՕ-ին», - հայտարարեց Անդրեյ Ֆոգ Ռասմուսսենը:
Մեկնաբանելով այլանսի գլխավոր քարտուղարի հայտարարությունը՝ ՆԱՏՕ-ում Վրաստանի դեսպան Լեւան Դոլիձեն, նշեց, որ այդ ծրարը Վրաստանին է՛լ ավելի կմոտեցնի ՆԱՏՕ-ին: «Բոլոր դաշնակիցները համաձայնում են, որ Վրաստանը լուրջ առաջընթաց ունի, եւ դա պետք է համապատասխանորեն արտահայտվի կոնկրետ քայլերում», - հայտարարեց Լեւան Դոլիձեն:

ՀԱՍՏԱՊՈՐՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՈՎԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ՝ ԱՄՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ

Վրաստանի մերձսեւծովյան Սուվխա ավանում գործարկվել է Ծովային գործողությունների կառավարման կենտրոնը, որի շինարարությունը ֆինանսավորվել է ԱՄՆ-ի կառավարության կողմից:

Կենտրոնի բացման արարողությանը մասնակցել են երկրի ներքին գործերի նախարար Ալեքսանդր ճիվանիզեի եւ Վրաստանում ԱՄՆ-ի դեսպան Ռիչարդ Նուրլանդը:



Կենտրոնի կառուցումն սկսվել է 2013 թվականի ապրիլին: Ինչպես այն ժամանակ հայտնել էր ՆԳ նախարարությունը, օբյեկտի շինարարության համար ԱՄՆ-ը Վրաստանին հատկացրել է 1,2 միլիոն դոլար:

Կենտրոնի բացմանը Վրաստանի ՆԳ նախարարը հայտարարեց, որ «ԱՄՆ-ի աջակցությամբ եւ ֆինանսավորմամբ բացված Կենտրոնը կծառայի Վրաստանի առափնյա գծի պահպանության արդյունավետության բարձրացման գործին, նրա՝ որպես տարանցիկ երկիր, ծովային անվտանգությանը»: Իր հերթին Նուրլանդը նշեց, որ «ԱՄՆ-ն ակտիվորեն համագործակցում է Վրաստանի կառավարության հետ՝ նպատակ ունենալով ամրապնդել անվտանգությունը Սեւ ծովի ավազանում, որը դառնում է ավելի ու ավելի ընդարձակվող ծովային փոխադրամիջանցք՝ Մետաքսի նոր ճանապարհի հանգուցային կետերից մեկը»:

ՄՈՑԻԱԿԱԿԱՆ

ԱԶԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ՄՈՑԻԱԿԱԿԱՆ ԱՆՊԱՆՏՊԱՆ ԵՐԵՄԱՆԵՐԻՆ



Վրաստանում սկսել է գործել ճգնաժամային վիճակում գտնվող ընտանիքների երեխաների անհետնորդների օգնության ծրագիրը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն, ծրագրի նպատակն է անհրաժեշտ կոնկրետ օգնություն ցուցաբերել այն ընտանիքի երեխաներին, ովքեր անսպասելիորեն հայտնվում են ճգնաժամային վիճակում: «Դա սոցիալական հոգաբարձության նախաձեռնարկ է, որը նախաձեռնվել է զարմանքով: Դա ճգնաժամային վիճակում գտնվող ընտանիքների օգնության ծրագիրն է: Եթե որոշակի հանգամանքներում ընտանիքը հայտնվում է հիմնախնդիրների առջև, օրինակ, երբ հարցեր են ծագում երեխաների կերակրման, հագուստի եւ այլն ուղ-

ղությանը, ապա երկրում չէր գործում ծրագիր, որը կարողանար անմիջականորեն արձագանքել ստեղծված իրավիճակին եւ հարցը կարգավորել հաշված ժամանակահատվածում: Ներկա դրությանը, ծրագրի բյուջեն կազմում է 1 միլիոն լարի, եւ այն ընդհանրապես նախատեսված է հազար ընտանիքի համար», - նշել է Դավիթ Սերգեյենկոն:
Նախարարի խոսքերով, սոցիալական ծրագրերի համար բյուջեն հատկացրել է շուրջ 2 միլիարդ լարի: «Առողջապահության եւ սոցիալական ծրագրերի համար բյուջեից հատկացվել է, ընդհանուր առմամբ, 2,7 միլիարդ լարի: Այդ գումարից միայն տարիքային կենսաթոշակը կազմում է 1,7 միլիարդ: Մեր հաշվարկներով, լրացուցիչ վարկեր վերցնելու կարիք չի զգացվի: Յետեւաբար, վերոնշյալ գումարը կբավարարի նաեւ հաջորդ տարվա ծրագրի իրականացման համար», - ընդգծեց Դավիթ Սերգեյենկոն:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ԱՅՄՊԵՏ ԿՈՉՎԱԾ ՀԱՆՐԱՔԿԵՆՆԻՆ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ

Հարավային Օսեթիայի ինքնահռչակ հանրապետության նոր խորհրդարանը հանրաքվեի կղմի ՌԴ կազմի մեջ չճանաչված հանրապետության մտնելու հարցը:

Այդ մասին հայտնել է հունիսի 23-ին ինքնահռչակ հանրապետության խորհրդարանի նորընտիր խոսնակ Ալախոյի Բիբիլովը: «Մենք չենք հրաժարվում մեր կարգախոսներից, այդ հարցում ոչ մի երկակի մոտեցում չի լինելու: Հարցը կրկին հանրաքվեի, բայց դրանով պետք է զբաղվի արդեն լիովին ձեւավորված խորհրդարանը», - ընդգծել է նորընտիր խոսնակը:
«Միասնական Օսեթիա» կուսակցությունը, որը գլխավորում է Բիբիլովը, խորհրդարանական ընտրություններում հավաքել է

ծայերի 46 տոկոսը: Նրա ընտրաշաղկի հիմնված էր Ռուսաստանի հետ միավորման գործընթաց սկսելու խոստման վրա: Հարավային Օսեթիայում խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել հունիսի 8-ին: Եվրամիությունում չեն ճանաչել քվեարկության արդյունքները, քանի որ Հարավային Օսեթիան ինքնուրույն պետություն չեն համարում:

ԱՐԽԱԳԻՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ՆԱԽԱԳԱԶԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱՊՐՈՒՄԸ

Ինքնահռչակ Արխագիայի հանրապետությունում սկսվում է նախագահի թեկնածուների առաջադրող կուսակցությունների եւ նախաձեռնող խմբերի գրանցման, ինչպես նաեւ պետության բարձրագույն պաշտոնի հավակնորդների առաջադրման գործընթացը:

Այն կշարունակվի մինչեւ հունիսի 14-ը: Արխագիայում վաղաժամկետ նախագահական ընտրությունները տեղի կունենան օգոստոսի 24-ին՝ կապված ընդդիմության պահանջով հունիսի 1-ին նախագահ Ալեքսանդր Անզլաբի պաշտոնաթողության հետ:

Նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունեն նախաձեռնող խմբերը եւ վեց կուսակցություն, որոնք երկրի արդարադատության նախարարությունում գրանցված են ընտրությունների նշանակված ամսաթվից հինգ ամիս առաջ: Դրանք են՝ Արխագիայի տնտեսական զարգացման կուսակցությունը, «Արխագիայի ժողովրդական միասնության ֆրոնտը», Արխագիայի ժողովրդական կուսակցությունը, Արխագիայի կոմունիստական կուսակցությունը, «Ամենայնայն» եւ «Միասնական Արխագիան»: Հունիսի 17-ին քաղաքական կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների Համակարգող խորհրդում միավորված ընդդիմությունը որոշում է ընդունել իր ղեկավարներից մե-

կին՝ Ռուր Խաջիբայիին, նախագահի թեկնածու առաջադրելու մասին: Նույն օրը իր թեկնածությունն առաջադրելու մտադրության մասին հայտարարել է Արխագիայի ներքին գործերի նախկին նախարար Լեոնիդ Ջապչան, որը գլխավորում է «Արխագիայի համաքաղաքացիական միություն-հանուն օրինականության, կայունության եւ ժողովրդավարության» հասարակական միավորումը: Արխագիայի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրանցել է նաեւ առաջին նախաձեռնող խմբերին, որոնք երկրի նախագահի թեկնածու են առաջադրել պաշտպանության նախարարի պաշտոնակատար Սիրաբ Կիչմարիային, նախկին առաջին փոխվարչապետ Բեսլան Էջբիին: Արխագիայի սահմանադրության համաձայն, երկրի նախագահ է ընտրվում երկրի ազգությամբ արխագ քաղաքացին, որն ունի 35-ից բարձր եւ 65-ից ցածր տարիք, օգտվում է ընտրական իրավունքից եւ տիրապետում է արխագերենին:



ՀԱՍՏԱՏՎԵՑ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱՆԴՁԱՄԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի կառավարությունը հաստատել է 2015-2017 թվականների տարածաշրջանային զարգացման ծրագիրը: Այդ մասին լրագրողներին հայտարարեց Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարար Էլզուրա Խոկրիշվիլին, նախարարների նիստի ավարտից հետո՝ հավելելով, որ դա պետական ծրագիր է: Այն մշակվել է Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրման հաշվառմամբ: Նրա խոսքերով, սեպտեմբերին Եվրամիությունն օգնության կարգով փոխանցելու է 30 միլիոն եվրո, եւ այդ գումարն ուղղվելու է տարածաշրջանային զարգացման ծրագրի իրականացմանը:

ԳՐԱՆՑՎԵԼ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԳԱՆԻ ԱՃ

2013 թվականին Վրաստանի գյուղատնտեսությունում գրանցվել է նշանակալի աճ: Հաշվետու ժամանակահատվածում գյուղմթերքների արտադրությունը կազմել է 3,4 միլիարդ լարի, ինչը 11,4 տոկոսով գերազանցում է 2012-ի եւ 17 տոկոսով 2011 թվականների ցուցանիշը:

Գյուղմթերքների վերամշակման արդյունքում ստացված ապրանքի արտադրությունը կազմել է 4,1 միլիարդ լարի, ինչը 10,4 տոկոսով գերազանցում է 2012 եւ 16 տոկոսով 2011 թվականների ցուցանիշը:

2013 թվականին ՀՆԱ-ում ավելացել է նաեւ գյուղատնտեսության բաժինը: Այն հասել է 9,3 տոկոսի, 2012 թվականի 8,6 տոկոսի դիմաց:

ՎԵՂ-Ն ԴԵՌ ԶԻ ԿԱՐՈՂ ՆՇԵԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների երկրորդ տուրի անցկացման օրը ԿԶ-ն չի կարող սահմանել, քանզի դա նրա իրավասություններից դուրս է: Այդ մասին հայտարարեց ՎԵՂ նախագահ Թամար Ժվանիան: ՎԵՂ նախագահի խոսքերով, երկրորդ տուրի ժամկետը կիրառական չէ հանձնաժողովի կողմից հանրագումարային արձանագրությունների ստացումից եւ դատավարական բոլոր քննարկումների ավարտից հետո:

Ինչ վերաբերում է կրկնական ընտրություններին, ապա դրանք կանցկացվեն հունիսի 29-ին հունիսի 15-ի ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչված 14 տեղամասերում: Նման ընտրություններ կանցկացվեն Մառնեուլիի ընտրական մարզի երկու, Ախալքալաքիի ընտրական մարզի մեկ, Բաթումիի մեկ ընտրական տեղամասերում:

ԱԽԱՔԱԼԱՔԻ ԴԱՏԱՐԱՆԸ ՉԲԱԿԱՐԱՐԵՑ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, «Ոչ խորհրդարանական ընդդիմությունը» Ախալքալաքիում բողոքարկեց տեղական ընտրությունների արդյունքները: Այն պահանջում էր Ախալքալաքիի ընտրական մարզի երեք տեղամասերում իրականացնել ձայների վերահաշվարկում: Ախալքալաքիի դատարանը չբավարարեց ընդդիմության պահանջը: Ինչպես հայտարարեց «Ոչ խորհրդարանական ընդդիմության» թեկնածու Արտաշ Փալանջյանը, առաջին ատյանի դատարանի որոշումն անպայմանորեն կբողոքարկվի:

ՀԱՐՑԱԶԻՐՈՒՅՑ

ՊԱՍՏԱ ԶԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ. «ՆԱԽ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՓՐԿԵՆՔ, ԱՊԱ ՈՐՈՇԵՆՔ, ԹԵ ՈՒՄ ԵՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բոլոր ոլորտները: Համաձայնագրով անմիջականորեն ազատ առևտրի մասին պայմանավորվածությունն ինքնին վիթխարի մշակակութային և տնտեսական կոնցեպտիաների և առանձին վերցրած յուրաքանչյուր քաղաքացու համար:

Ասոցիացիան համաձայնագրում առանձին բաժին է հատկացրած ազգային փոքրամասնությունների հարցին: Այս տեսակետից հատկապես կարևոր է մի հանգամանք: Եվրոպական մեր գործընկերները ազգային փոքրամասնությունների հետ հարաբերություններում երկրին շատ ավելի մեծ պարտավորություններ են պարտադրում, քան դրանք նախատեսված են համաձայնագրով: Ներկայացվող պարտավորությունները բազմաթիվ են, ներառում են կրթության ու մշակութային ոլորտները: Բնականաբար, նաև առանձնակի ուշադրություն է հատկացվում զբաղվածության թեմային: Այնպես որ, Ասոցիացիան համաձայնագիրն է՛լ ավելի է ընդգծում ազգային փոքրամասնությունների ինտեգրման մշակակութային: Բնականաբար, պետությունն ինքն էլ հնարավոր ամեն ինչ անում է ինտեգրման գործընթացի լիարժեք համընդգրկում անցկացնելու համար: Ազգային փոքրա-

մասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում մշակվում են բազում նախագծեր, որոնցից, հավանաբար ամենամշակակալիցը պետական լեզվի ուսուցման մակարդակի բարձրացման ուղղված նախագիծն է: Համոզված են, որ առաջիկայում ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում Սամցխե-Ջավախեթիում եւ Զվեմո Ջարթլիում, վերոնշյալ նախագծերն է՛լ ավելի լայն կիրարկում կունենան:

- Վերջին ժամանակներս բախված է ընդհանրապես մի քանի վիճակների եկեղեցիների թեման: Խոսքը վերաբերում է ինչպես այդ եկեղեցիների պատկանելությանը, այնպես էլ՝ վերոնորոգման ու վերականգնման աշխատանքներին: Ի՞նչ կատարվի այդ մասին:
- Ընդհանրապես, հարկ են համարում մշել, որ Վրաստանի տարածքում առկա բոլոր եկեղեցիներն ու պաշտամունքային հուշարձանները Վրաստանի մշակութային ժառանգությունն են, եւ Վրաստանի պետությունը պարտավոր է հավատարմորեն մասնագետներին հարցազրույցներ անցկացնել, որ Վրաստանի տարածքում առկա բոլոր եկեղեցիներն ու պաշտամունքային հուշարձանները Վրաստանի մշակութային ժառանգությունն են, եւ Վրաստանի պետությունը պարտավոր է հավատարմորեն մասնագետներին հարցազրույցներ անցկացնել, որ Վրաստանի տարածքում առկա բոլոր եկեղեցիներն ու պաշտամունքային հուշարձանները Վրաստանի մշակութային ժառանգությունն են:

սարապես տնօրինել եւ խնամել դրանք:
Ինչ վերաբերում է վիճարկելի այդ մի քանի եկեղեցիներին, ապա, իմ խորին համոզմամբ, տվյալ պարագայում առաջնային պլան պետք է մղել դրանք փրկելու, վերանորոգելու հարցը: Նախ եկեղեցիները փրկենք, ապա որոշենք, թե ում են նաեւ միմյանց հանդեպ բարեկամաբար տրամադրված Հայաստանի եւ Վրաստանի պատրիարքարանները: Ինչ վերաբերում է իմ դիրքորոշմանը, ապա համոզված եմ, որ հեռու չէ այն ժամանակը, երբ համատեղ ջանքերով մենք հստակություն կմտցնենք եկեղեցիների պատկանելության հարցում: Հասարակական քննարկում է լինում, որ Դավիթ Բեդեգի կողմնակալը, որ Վրաստանի տարածքում առկա բոլոր եկեղեցիներն ու պաշտամունքային հուշարձանները Վրաստանի մշակութային ժառանգությունն են:

մոզված են նաեւ, որ այդ եկեղեցիները կվերադարձվեն իրենց օրինական տերերին:
- Վերջերս ազգային կամ կրթական հողի վրա լսվում են ոչ կոռեկտ հայտարարություններ: Ի՞նչ կատարվի այդ մասին:

- Իրավացի էք, նման հայտարարություններ եւ անզամ գործողություններ, իրոք, տեղ են գտել: Թեպետ դրանց դեմ ակտիվորեն հանդես են գալիս վրաց հասարակության մեծամասնությունն ու քաղաքացիները: Իրոք, եղել են դեպքեր, երբ ազգային կամ կրթական հողի վրա, իմ խորին համոզմամբ, տգետ մարդիկ իրենց թույլ են տվել ոչ կոռեկտ, վիրավորական արտահայտություններ անել: Սակայն հավատարմորեն եմ, մեր հասարակայնությունը մեծ մասամբ բաղկացած է սթափ մարդկանցից, ովքեր ման դեպքերում կտրուկ եւ խիստ արձագանքում են: Վստահեցնում եմ, որ ասելուս լեզվով արված յուրաքանչյուր հայտարարություն իշխանությունների կողմից անպատասխան չի մնա: Պետությունն իր ոչ մի քաղաքացուն սահմանափակումներ չի պարտադրում: Գլխավոր այն է, որ քաղաքացիների գործողություններն ու հայտարարությունները վրացական պետության դեմ ուղղված չլինեն:
ՅՈՒՐԻՍՏՆԵՍԱԼ



ԵՎՐԱՄԻՆՏԵԳՐՈՒՄ

ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՁԱՅՆԱԳԻՐ. 50 ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Համաձայնագիր կիրարկվելու է՝ հաշվի առնելով Վրաստանի ազգային յուրահատկությունները: Եվրամիությունը օգնելու է Վրաստանին բարեփոխմանը իրականացնելու գործում փորձագետների եւ պետական բյուջեի համար զուտար հատկացնելու ուղիով: Վրաստանը նաեւ հնարավորություն կունենա գումարներ ստանալ Եվրոպայի ֆինանսական կազմակերպություններից՝ ենթակառուցային նախագծերի (այդ թվում՝ ճանապարհների, կամուրջների, ջրամատակարարման համակարգի եւ այլն) իրականացման համար:
Եվրամիությունն աջակցում է Վրաստանի տարածքային ամբողջականությանը միջազգայնորեն ճանաչված սահմաններում եւ օգնում է Վրաստանին խաղաղ ճանապարհով վերականգնել տարածքային ամբողջականությունը, որը շարունակվելու է Ասոցիացիան համաձայնագրի ստորագրումից հետո:
Ըստ Ասոցիացիան համաձայնագրի, Վրաստանը եւ Եվրամիությունը կիրականացնեն ամերիկեյտ բոլոր հնարավորությունները, որպեսզի ապահովեն Եվրամիության հետ անայցեզրային պայմանակարգը:
Ասոցիացիան համաձայնագրի իրականացման արդյունքում, Վրաստանում կբարձրանա կենսամակարդակը: Մասնավորապես.
1. Կբարելավվի մարդու իրավունքների պաշտպանությունը եւ կապահովվի օրենքի զերակայությունը:
2. Կմեծանա դատական իշխանության անկախությունը եւ արդարադատության մատչելիությունը:
3. Աջակցություն կցուցաբերվի եւ կհաստատվի խոսքի, մամուլի, ինչպես նաև միավորումների կազմավորման ազատությունը:
4. Առավել մատչելի կդառնա մայրենի լեզվով տարրական կրթությունը:
5. Կբարելավվի հասարակության մասնակցությունը երկրի կառավարման գործում:
6. Կապահովվի տարածաշրջանների միջեւ սոցիալ-տնտեսական անհավասարության նվազեցումը, կբարձրանա տարածաշրջաններում ապրող բնակչության կենսամակարդակը:
7. Աճելու են համագործակցության հնարավորությունները Վրաստանի տարածաշրջանների եւ Եվրամիության անդամ երկրների տարածաշրջանների միջեւ:

8. Վրաստանի տարածաշրջաններին ավելի մեծ հնարավորություն կընձեռվի մասնակցելու Եվրամիության ծրագրերի եւ նախագծերի իրագործմանը:
9. Կապահովվի զբաղվածության եւ աշխատանքի հետ կապված ցանկացած խտրականության վերացումը:
10. Կբարելավվի աշխատանքով ապահովված ամձանց իրավունքների պաշտպանությունը:
11. Կստեղծվի աշխատանքի հետ կապված օրենսդրության պրակտիկայում իրականացնելու վերահսկման հատուկ ծառայություն:
12. Կապահովվի աշխատանքային պայմանների բարելավումը:
13. Աշխատանքով ապահովված ամձանց առողջության եւ անվտանգության պաշտպանության նպատակով կմշակվեն աշխատանքային չափորոշիչներ:
14. Կապահովվի սոցիալական արդար պաշտպանության համակարգի կազմավորումը:
15. Կհզորացվի առողջապահության պաշտպանության համակարգը, եւ կբարելավվի բժշկական ծառայության մակարդակը:
16. Ավելի շատ ուշադրություն կհատկացվի հիվանդությունների կանխարգելման, սկզբնական շրջանում հայտնաբերման եւ վերահսկման վրա:
17. Կբարելավվի առողջ ապրելակերպը:
18. Կբարելավվի մասնավոր սեփականության, մտավոր սեփականության իրավունքների, այդ թվում՝ ապրանքանիշի, աշխարհագրական նշումների, դիզայնի, արտոնագրերի եւ այլնի պաշտպանությունը:
19. Կուժեղացվի պայքարը կազմակերպված հանցագործության, ահաբեկչության, բռնաշորթության, թմրանյութերի ապօրինի օգտագործման, մարդկանց առեւանգելու (թրաֆիկինգ) դեմ:
20. Կարտադրվի եւ կվաճառվի միայն անվնագ սնունդ եւ անվտանգ ապրանք:
21. Կհաստատվի Վրաստանի եւ Եվրամիության միջեւ ներմուծման եւ արտահանման արարողակարգը:
22. Կապրագեցվի Վրաստանի եւ Եվրամիության միջեւ ներմուծման եւ արտահանման արարողակարգը:
23. Կբարելավվի մրցունակ միջավայրը:
24. Կաճեն ներդրումները Վրաստանի էկոնոմիկայի բոլոր ոլորտներում:
25. Կհիմնվեն նոր ընկերություններ, եւ կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր:

26. Վրաստանը կմիանա Եվրամիության համընդհանուր էներգահամակարգին:
27. Կաճի Վրաստանի էներգետիկական անվտանգությունը:
28. Կաճի վրացական արտադրանքի (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի) որակն ու մրցունակությունը համաշխարհային եւ Եվրամիության շուկաներում:
29. Գյուղատնտեսական արտադրանքի վերանշակման նպատակով կստեղծվեն նոր ձեռնարկություններ, բացի այդ, նորացվելու եւ արդիականացվելու են գոյություն ունեցող գյուղատնտեսական ձեռնարկությունները:
30. Երկրի տարածքը առավելագույնս պաշտպանվելու է կենդանիների եւ բուսական աշխարհի հիվանդությունների ներկրումից ու տարածումից:
31. Կաճի զբոսաշրջիկների հոսքը Եվրամիության երկրներից:
32. Կբարելավվի բարձրագույն կրթության մակարդակը, եւ այն կմոտեցվի եվրոպական չափանիշներին:
33. Կընդլայնվի համագործակցությունը Եվրոպայի եւ Վրաստանի բարձրագույն կրթական ու հետազոտական հաստատությունների միջեւ:
34. Կաճի փոխանակման ծրագրերի քանակը, որին կմասնակցեն ուսանողները, գիտնականները, պրոֆեսոր-մանկավարժները:
35. Կզարգանա մասնագիտական կրթության ու վերապատրաստման համակարգը:
36. Կմեծանա ճանապարհային (ցամաքային), ծովային եւ օդային տրանսպորտի մակարդակն ու անվտանգությունը:
37. Կիրականացվեն նախագծեր ջրամատակարարման համակարգի կարգավորման եւ բնակչությանը մաքուր ջրով ապահովելու նպատակով:
38. Կիրականացվի խնեւելու ջրի եւ օդի մաքրության որակի մշտական վերահսկողություն՝ ինչպես քաղաքներում, այնպես էլ տարածաշրջաններում:
39. Լճերի եւ Սեւ ծովի փամբեր զոտու ջրի որակը բարելավվելու նպատակով, իրականացվելու են բարեկարգման աշխատանքներ: Լողակազաններում պարբերաբար վերահսկվելու է աղոտտ ճյութերի առկայությունը:
40. Կմեծացվեն ձեռնարկությունների պարտավորությունները՝ շրջակա միջավայրի պաշտպանությունը ապահովելու, համապա-



տասխան միջավայրի պաշտպանության նպատակով տեխնոլոգիաներ ներդրելու օգնությամբ:
41. Գործելու է «Կեղտոտողը վճարելու է» սկզբունքը, թափոններ առաջացնող կամ սեփականատերը պարտավոր է գումարներ հատկացնել՝ թափոնները պակասեցնելու, անվնաս եւ անվտանգ ձեւով այն տեղադրելու նպատակով:
42. Կբարելավվի աղբաքակղերի վիճակը, գործելու են թափոններ եւ մնացուկներ վերանշակող ձեռնարկություններ:
43. Անցկացվելու են միջոցառումներ ջրհեղեղների ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:
44. Կատարելագործվելու են կենսաբանական բազմազանության, այդ թվում՝ վերացման եզրին գտնվող բուսական ու կենդանական աշխարհի պաշտպանության մեխանիզմները:
45. Կարմատավորվի անտառների ռեսուրսների կառավարման, հաշվառման եւ խելամոտեն օգտագործելու Եվրոպայում առկա փորձը:
46. Կկատարելագործվի վերահսկման համակարգը ծառերի եւ անտառների ապօրինի հատման ու ապօրինի վաճառման վերացման նպատակով:
47. Կցուցաբերվի աջակցություն Վրաստանի մշակույթի քաղաքականությանը, որը հոգալու է մշակութային բազմազանության, մշակութային ժառանգության եւ ինքնության պահպանման ու պաշտպանության համար:
48. Կրաստանի աջակցություն կցուցաբերվի Եվրամիության անդամ երկրներում Վրաստանի մշակույթի տարածման համար:
49. Առանց աշխարհագրական դիրքի տարբերության բոլոր սպառողներին կցուցաբերվի աջակցություն մատչելի գնով հեռուստահաղորդակցական ծառայությունից օգտվելու համար:
50. Աջակցություն կցուցաբերվի հեռուստահաղորդակցական ծառայության տեսակների բազմազանությանը եւ նոր հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմանը: